ԱՄԵՆԱՑՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ
Պարտին ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅԿ»ի
ՏՈՔՏ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.

Ձեռագիրք Չեն Վերադարձուիր

—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅԿ

HAIK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D. Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒԼԻՍ 1 1891 ԹԻՒ 13

Entered as second-class mail matter. at P. O. New York.

ՐՈՍԱՆԵՐՈՒԹԻՒՆ

Հայ Ազգին Ո-ժէրդ — Պապասխան 11000ի առ Հ. Հ. Յանձնախումբն Նի- Եորքի — Դարձ Պապասխան-ոյ Ն. Եորքի Հ. Հ. Յանձնախմբին առ 11000 — Դարձ Պապասխան-ոյ Ն. Եորքի Հ. Հ. Յանձնախմբին առ Հ. Հ. Յանձնախումբն Թուրքի — Պապասխան Ռ առ Մ. Պէնճէմէն — Հայերէն Էրէր- Աբեանաբօսական Լէզու — Հարսպահարէալն Վարդեանի — Ամէն Ամէն:

ՀԱՅ ԱԶԳԻՆ ՈՒԺԵՐՆ

Նախորդ թուով կ'ըսէինք թէ պատերազմն մ ը ր յանք վասն կենաց կոչուած օրէնքին ահաւոր բայց օգտակար և անխուսափելի արդիւնքն է։ Երբէք ազգ մի քաղաքակրթուած չէ առանց պատերազմելու, կարելի է ըսել թէ քան զամենայն աւելի քաղաքակրթեալք դերազանցապէս պատերազմիկ ազգաց դասէն եղած են։ Աշխարհի ներկայ պայմանաց մէջ ալ չեմք կարծեր թէ մեծ ազգ մի կրնայ զերծ մնալ տկարանալէ և ոտից կոխան լինելէ՝ եթէ պատերազմ ընելու գաղափարէն և պատրաստութիւններէն հրաժարի։

Թէ Հայն ո՛ր աստիճան պատերազմիկ ազգ մ'եղած է ի հնումն, զայն ուրիշ անգամ պիտի քննեմք. ինչ որ առանց շատ քննութեան կրնայ ամէն ոք ընդունիլ է սա՝ թէ այժմ մեր ցեղին մէջ զինուորական ոգին յոյժ տկարացեալ վիճակի մէջ է։ Միայն աստ անդ, զոր օրինակ ի Զեյթուն, ի Կեավուր Տաղ, ի Լերինս Սասնոյ, պահպանուած կայ մնայ մեր նախնեաց Զինուորական ոգիէն և զինուց վարժութենէն։ Ոչ ալ բացատրութեան կարօտ է իրաց այս տխուր վիճակն. Հայքս բազում դարերէ ի վեր հպատակ ազգ եղած լինելով, տիրող ցեղերու սրրուին պաշտպանուած եմք, անձնապաշտպանութիւնն արգիլուած է մեզ։ Մինչեւ անդամ տիրող ցեղին բանակաց մէջ զինուորական ծառայութեան ընդունուած չեմք, որպէս թէ մեք անարժան լինէինք զինուորական դրծուղութեան և փառաց մասնակցելու։ Թրքական առակ մի կ'ըսէ «գիտութիւնն Ֆրէնկին, վաճառականութիւնն Հայուն, իսկ սալթանաթն Տաճկին կը վայլէ.» սալթանաթ կնշանակէ թագաւորութիւն և անոր յարակից փառքն ու պերճանք։ Ազգային անկախութենէ և զինուորական ասպարէզէ զրկուած լինելով՝ Հայք անձնատուր եղած են իրենց վաճառական հակամիտութեան, և յամենայն գաղթականութիւնս, ինչպէս ի Վենետիկ, ի Հնդկաստան, յԵգիպտոս և. ի Մանչէսթր, նշանաւոր հանդիսացած են իբրեւ վաճառական ժողովուրդ։ Այսպէսով մշակուած է ի մեզ հաշուելու, նախատեսելու, խնայելու կարողութիւն, օտար միջավայրի և օտար ցեղերու յարմարելու ընդունակութիւն։ Օտար ազգեր, մինչեւ անգամ Թուրքն ալ, կընդունին թէ Հայն սրամիտ է։ Ուրեմն Ազգն ԻՄԱՑԱԿԱՆ ՈՑԺ բաւական առատ ունի։

ՆԻԻԹԱԿԱՆ կամ ԴՐԱՄԱԿԱՆ ՈՒԺԻ մասին եւս աղքատ չէ ազգն. Տաճկաստանի սահմանաց մէջ Հայերն արդարեւ երբեմնի հարստութիւնն չունին այժմ. միլիոններով ոսկի կորուսին քոնսոլիտներու պատճառաւ, և հարստութիւնք ձեռն պէս շարունակ հալելու և նուազելու վերայ եղած են շնորհիւ Օսմանցւոյ ապուշ «սալթանաթ»ին։ Ի վերայ այսր ամենայնի Հայ ցեղն, ամբողջ առնլով, բաւական հարուստ ցեղ մ'է իւր թբուոյն բաղդատմամբ։ Ռուսահպատակ մերազնեայք, թուի թէ, հեզհետէ կը հարստանան։ Գաղթականութեանց մէջ ալ ահագին հարուստներ չեն պակսիր, ինչպէս յԵգիպտոս, ի Հնդիկս և յԵւրոպա։ Մեր ցեղին մէջ կան այժմ անհատներ որք մէկ միլիոն, հինգ միլիոն, տասը միլիոն լիրայի տէր են, և կարելի է ահագին գումար ընդունիլ անոնցմէ յօգուտ Հայ դատին. թէև առ այժմ ոչ նոքա յօժար են տալու և ոչ մեք արժանի՝ ընդունելու։

ՖԻԶԻՐԱԿԱՆ ՈՑԺ ալ առատօրէն ունիմք։ Մեր ցեղ նշանաւոր է իւր մարմնական ուժոյ մասին, մեր երկրի լեռներն և ցուրտ կլիմայն ժայռի ամրութիւն և տոկունութիւն տուած են մեզ։ Օտարներն յաճախ զարմանք յայտնած են հայ բեռնակրաց առասպելական ուժին վերայ։

Այո՛, Ազգին մէջ իմացական, նիւթական և ֆիզիքական ոյժ առատ է։ Եւ սակայն ծիծաղելի պիտի լինէ՝ ինք եթէ ըսէինք թէ Հայ Ազգն զօրաւոր է։ Ի՞նչպէս կը լինի ուրեմն որ շատ ոյժ ունենալով հանդերձ շատ տըկար ազգ մ'եմք։ Մեկնութիւնն դիւրին է. երկու պատճառ կայ մեր տկարութեան։

Նախ, մեր իմացական և նիւթական ուժերն անկերպարան, ցրուեալ վիճակի մէջ են։ Միլիոնատէրներ ունիմք, ունիմք նաև յոյժ հանճարեղ և գիտուն ազգայիններ, բայց ասոնք անհատներ են մանաւանդ ցրուեալ աստ անդ, և պաշտօնական և համակրական մասնաւոր յարաբերութեամբք իրարու կապուած չեն այնպէս որ մարմին կազմեն և զօրութիւն լինին Ազգին։ Կրնամք այսպիսիներն նմանցունել հաստատուն և հզօր սիւներու, որք դժբաղդաբար առանձին մնալով՝ ազգին տունն ալ աւերակ կը մնայ, ազգին նուիրուելու յոժար չեն այս սիւներու շատն, և անոնք ալ որ յոժար են, ամէն մէկն կը պնդէ թէ ինքն կարող և յարմար է իր վերայ կրելու հայրենեաց շինութեան հոգն։ Եղբա՛յրներ, ցորչափ սիւն սեան քով չդայ, չէնք չպիտի կրնայ շինուիլ, զօրութիւն չպիտի կրնայ գոյանալ, տկար պիտի մնամք իբրեւ ազգ, թէև իբր անհատ լինիմք հզօր։ Ո՜հ, ե՞րբ ամեն ոք պիտի հասկնայ զայս։

Երկրորդ պատճառ մեր ազգային տկարութեան՝ է մեր ֆիզիքական ուժին անմշակ, վայրենի վիճակի մէջ գտնուիլն։ Հայ ցեղն կրնայ 400 հազար հոգիէ բաղկացեալ բանակ մի հանել իւր ծոցէն. գաղթական Հայերն կրնան 10 հազար զինուոր հանել։ Ի Հայաստան, ի Փոքր Ասիա և ի Կիլիկիա մեր ուղեւորութեանց մէջ տեսած եմք հսկայազօր երիտասարդներ, որոցմէ կրնան կազմուիլ գերազանց գնդեր, Թագուհւոյն ընտրելագոյն զօրաց հետ բաղդատելու արժանի լեգէոններ։ Քաղաքներ տեսած եմք, որոց իւրաքանչիւրն կրնայ 500,— 600, և աւելի կարիճներ ընծայել Հայրենեաց։ Բայց այս թիկնեայ և հաստաբազուկ, բարձրահասակ և ուժեղ Հայեր մինթէ կրնա՞ն այսօր այն հրաշագան քաջութիւններ գործել զորըս արժանապէս կրնայինք սպասել Տիգրաններու և Վարդաններու զաւակներէն.—ո՛չ։ Չեն կրնար սոքա քաջագործել վասն զի գերազանց զինուորի երկու լաւ յատկութիւններն միայն ունին — ոյժ և քաջութիւն, բայց թափուր են ի կրթութենէ, որ էական է ներկայ պատերազմաց մէջ աւելի քան ի հնումն։

Մեր մեծագոյն կարօտութիւնն է այսօր ոչ դրամ և ոչ խելք, այլ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՅԺ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ։

Եթէ միլիառատէր Հայ մի համոզէր Սուլթանն և Հայաստանն կամ անոր մէկ մասն դնէր ոսկւով, մինթէ կը փրկուէի՞նք.—ո՛չ, նորէն և շուտով պիտի յափշտակուէին հողերն մեր ձեռքէն. հողի տէր լինիլ հերիք չէ, պարտ է ոյժ ունենալ զայն տաշտպանելու։

Այս համոզմամբ տարի և կէս առաջ կազմակերպեցինք Նիւ Եօրքի մէջ մարմնամարզական ընկերութիւն մի «Արարատեան Գունդ» անուամբ, և ուրախ եղանք տեսնելով որ Ուսթրի Հայերն ևս հետեւեցան մեր օրինակին։ Դժբաղդաբար «ներքին ոյժ» պէտք է ըսողներէն մին, մեզ անթափանցելի մնացած շարժառիթով, և հակառակ մեր յատուկ խնդրանաց, չհաճեցաւ իւր թերթի միջոցաւ այս շարժման թափ տալ և յորդորել զայլ գաղթականութիւնս ևս ի նոյն ուղղութիւն։ Օսմանցիք մեր դիւանագիտական հիգերէն կը վախնան, բայց աւելի ևս զարհուրեցան զինուորական կրթութեան սկզբնաւորութենէն, և մեր ընկերութեան համբաւն չափազանցեալ ձեւով հասած լինելով ի Կիլիկիա, անցեալ տարի, Զեյթունի յուզմանց առեն, կարծելով թէ իրօք 25,000 զօրօք մեք կը շարժիմք երթալ յօգնութիւն Կիլիկիոյ Հայոց, մինչև անգամ Մարաշի մզկիթներուն առջեւ պահապան զինուորներ դնելու չափ զգուշութիւններ ձեռք առած են և մեր անունն վաղանցիկ երկիւղ մի ներշնչած է Թրքաց։

Այժմ որ թերթ ունիմք և տպարան, զինուորական կրթութեան դործն կը յուսամք աւելի զարգացեալ մեթոտով վերսկսիլ և տարածել զայն Միացեալ Նահանգաց և ուրիշ երկիրներու գաղթականութեանց մէջ։ Երբ գաղթական Հայեր դիտան սուին, սուր, հրացան դործածել Ֆռանսացի և Գերմանացի կիրթ զինուորներու նման, տարակոյս չունիմք թէ անզգալի կերպիւ մայր հայրենեաց Հայերուն ալ պիտի անցնի այդ կրթութիւն և անոր յատուկ եղող ֆիզիքական ճարտարութիւնն և բարոյական քաջութիւնն։ Ազգն նոր խմոր մի պիտի ընդունի զինուորական ոգւոյ և պիտի փոխակերպի։ Ոչ միայն ցաւ զգալ և բարկանալ այլ և զարնել պիտի զիտնայ, զինուորի նման զարնել։

Մեր թերթի առաջին վեցամսեայ շրջանին մէջ միշտ խօսեցանք կեդրոն մի կազմակերպելու խնդրոյն վերայ, և այդ խնդիր այժմ գործնական հոգածութեան առարկայ մ'է ընդհանուր։ Այժմ, այդ մեծ խնդրոյն հետ կը սկսիմք յառաջ մղել զինուորական կրթութեան խընդիրն ևս։

Մեր քաղաքականութիւնն է,

Ա. Կազմակերպեալ ձեւի բերել, համախմբել Ազգին նիւթական և իմացական ոյժերն։

Բ. Տկարացած ուժերն, մասնաւորապէս զինուորական ոգին և կրթութիւնն զարթուցանել և մշակել յԱզգին։

Կը յուսամք թէ 1891 տարին դեռ չաւարտած՝ Ազգն պիտի տեսնէ Կեդրոնական Ցանձնախումբն, որ Ա. նը պատակին պիտի նուիրուի, և Զինուորական Կրթութեան վերայ գրուած հայերէն դասագիրք մի պատկերազարդ, որ Բ. նպատակին պիտի ծառայէ։

«ՀԱՅՐ»ի բաժանորդ դրուիլ ուզողներուն կը ծանուցանեմք թէ թերթիս առաջին թիւէն սկսեալ կարող եմք յղել իրենց. նոյնպէս պակասեալ թիւերն կրնամք յղել այն բաժանորդաց որք կը բաղձան ամբողջ տարեկանն կազմել տալ, ինչպէս կը տեղեկանամք թէ շատերուն փափաքն է։

Պարսկաստանի Հայոց համար բացառութիւն ընելով, թերթիս տարեւոր բաժանորդագին կը նշանակեմք եօթն ուկէս ֆրանք։

«Օսմանեան վարչութիւնն, դոնէ քրիստոնեայ հասարակութեան մասին կենդանի ուրացում մ'է այն տարրալան սկզբանց որոց վերայ քաղաքակիրթ կառավարութիւնն հիմնեալ է։—Անոր դէմ ելնել առաքինութիւն մ'է, անոր թոյլատու լինիլ ոճիր մ'է»—

ԲԵՐԱՆ ԿԼԱՏՍԹԸՆԻ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Նիւ Եորքի ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ հրատարակութեան կուսակցութեան, փոքր ինչ համառօտեալ, որ պատասխան է իւր ծանօթ շրջաբերականին։

ՆԱՄԱԿ
Կ. ՊՕԼՍԷՆ

Կ. Պոլիս 27 Մայիս 1891

Ազնիւ Տէր,

Գոհութեամբ սրտի ստացանք Ձեր 7 Մայիս 1891 թուակիր շրջաբերականն և ընդ նմին Հայ Գաղթականութեանց Կազմակերպութեան Ծրագիրն։

Ձեր Ազնուութեան առաջարկութեան պատասխանելէ առաջ հարկ կը համարիմք մեր նպատակի մասին մի քանի սրոշ բացատրութիւններ տալ, որպէս զի յապագային մեր գործառնութիւնք համընթաց ուղղութիւն մ'առնուն։ Ինչպէս կարող էք վերահասու լինել մեր գրութիւններէն, մեր աշխատութիւնք իմասին ճուլման արդէն գտնուած Հայրենասիրական Միութեանց, դրեթէ վեց ամիս առաջ ծնունդ առած է. և մենք այս երկար ժամանակամիջոցի մէջ ստիպուած եմք քրքրել, քննել և ուսումնասիրել մեր համայն գործիչներու նպատակն և ուղղութիւնքն։ «Արմէնիա»ի՝ բոլոր առաջնորդողները, վարդապետարանը, կանոնադիրը և այլն. «Հնչակ»ի թերթերը և ծրագիրը. «Հայաստանի» ու «Լ'Արմէնի»ի ուղղութիւնքը և դրեթէ արդէն յանդած եմք մեր որոշման...

Թէ մեր այսքան ժամանակեայ քննութեանց և ուսումնասիրութեանց արդիւնք ի՛նչ եղաւ, պարտք կը համարիմք առանձին յայտնել Ձեզ համառօտակի։

1. «ՀԱՅԱՍՏԱՆ»ի ուղղութիւնը քանի որ կ'ըսէ, Եւրոպական մեծ պետութիւնք պարտականութիւն ստանձնած են Պէրլինի դաշնագրի 61 րդ յօդուածի զօրութեամբ հսկել այն բարենորոգմանց զորս Թուրք կառավարութիւնը յանձն առած է պարբերաբար իգործ դնել, նա մաւանդ Անգլիա՝ որ Կիպրոսի ծանուցեալ դաշնագրի զօրութեամբ եւս մասնաւոր պարտականութիւն յանձն առած է Հայաստանի նկատմամբ, հետեւաբար պէտք է դիմումներ ընել միշտ առ համայն Եւրոպական պետութիւնս, որպէս զի սոքա ուշադրութեան առնլով Հայ Ազգի կրած չարչարանք ու տառապանքը, ըստ իւրեանց պաշտօնական յանձնառութեան, պարտ ու պատշաճն իգործ դնեն Հայերն ազատելու և Հայաստանի մէջ բարենորոգումներ ներմուծելու համար ճնշում բանեցուցեն Թուրք կառավարութեան վերայ։ (Ի հարկէ եթէ իրենց մասնաւոր շահերը ներեն...։)

Ամենքս ալ քիչ շատ կը հասկնանք թէ այս սկզբունք ունի իր օգտակար կողմերն. բայց մի՞թէ բաւական է դիմումներով սպասել ու քնանալ...։ Անհաւասիկ այս մասին նոյն իսկ «Հայաստան»ի Խմբագրութեան խոստովանութիւնը՝ որով կը յայտարարէ թէ, դժբաղդաբար մինչ ցարդ իրենց ըրած ամեն ջանքերն ապարդիւն մնացին, կամ թէ՝ մինչեւ որ Պ. Կլատսթըն իշխանութեան գլուխ չգտնուի, իրենք յոյս չունին որ կարենան բան մ'ընել ազգին համար և այլն։ Ուստի առանց այլ եւս երկար բարակ քննութիւններ անելու, վերջնականապէս և հաղար փորձերով ու կատարելապէս համոզուեցանք և հաւատացինք որ միայն դիմում անելով, լալով, աղաչելով և մուրալով մարդու բան չեն տար։

2. «Լ'ԱՌՄԷՆԻ» կամ Պ. Մ. Զերաղ, Պէրլինի Հայոց պնտուիրակներէն մին։ Սա աւելի գործնական կերպով օգտակար կը հանդիսանայ ազգին՝ նորա բոլոր բարեմասնութեամբն կամ պատմութեամբ ծանօթացնելով զՀայն առաջի համայն Եւրոպայի, միանգամայն դիմելով ի հարկին պաշտօնական դահլիճներու ու գոցա գութն ու կարեկցութիւնն շարժելով։ Սորա համար եւս կը խոստովանիմք թէ հաւատարիմ մնալով իր սկզբանց և տակուն, բայց միայն նոյն ուղղութեամբ, ո՛չ գործնական արդիւնք արտադրելու չափ զօրաւոր։

3. «ԱՐՄԷՆԻԱ» կամ Պ. Մ. Փորթուգալեան։ Իր սկիզբ առած օրէն մինչեւ ցայսօր ամենայն ոգեւորութեամբ կը գրէ, կը քարոզէ. արթնցէ՛ք, կազմակերպուեցէ՛ք, օտարէ յոյս մի՛ ունենաք,, յեղափոխութեան պատրաստուեցէ՛ք, միացէ՛ք...։ Շատ օգտակար սկզբունք. ժողովուրդը գրդեալ, կրթեալ, վառեալ և պատրաստեալ. բայց անկեղծաբար կը խոստովանիմք որ իր ամէն բարեմասնութեամբն հանդերձ, ունի իր թերի կողմերը, վասն զի ամեն բան կ'ըսէ և ընել կը քարոզէ, բայց արհեստէ զուրկ է, այսինքն որոշ ուղղութիւն կամ ծրագիր չունի և յանձնապատասխան է։

4. «ՀՆՉԱԿ»եան կուսակցութիւն. ունի ծրագիր մը գրեթէ կանոնաւոր. ժողովրդեան բարեկեցութեան համար ներկայով ու ապագայով նախագծեալ. կա՛յ նորա մէջ յեղափոխական արհեստը պատկերացնալ իր ամէն մանրամասնութեամբը. թէ ի՛նչպէս պէտք է սկսիլ, թէ ի՛նչ տեսակ առանձնակի ուժերով և ուղղութեամբ պէտք է շարունակել և թէ որպիսի հաւաքական գործութեամբ պատրաստելու է յեղափոխութեան ընդհանուր և սուրբ գործը, հասնելու համար մեր մտադրած նպատակին։ Բայց ո՞չ ապաքէն փորձով տեսանք թէ սա ալ վրիպեցաւ և կասեցաւ իր ընթացքի մէջ. ինչու՞.. վասն զի՝ իրաւ որ եռանդ կար, բայց հեռատեսութիւն չկար. գործելու եղանակ կար, բայց ընտրութիւն չկար. ուղղութիւն կար, բայց կազմակերպութիւն չկար...։ Միլիոններէ բաղկացեալ քրիստոնեայ աշխարհն այսօր նախախնամութեան, Աստուծոյ կը հաւատայ, բայց յանուն Երրորդութեան. Երրորդութիւն՝ անբաժանելի, Երրորդութիւն՝ խորին խորհրդով մը կերպարանացեալ. Հայր, Որդի, Հոգի. արդեօք կը մեղանչե՞մք եթէ սա կերպ բացատրութեամբ մը պարզենք այս պաշտեցեալ Երրորդութիւնը. Կատարելութիւն, Զօրութիւն, Ուղղութիւն և որոց համերաշխ և անքակտելի միաւորութեամբն լրումն Աստուածութեան։

Այսպէս կարեմք հաւատալ և մեր նպատակի իրագործման և փափաքանաց լրացման մասին։ Եթէ զմեզ առաջնորդելու կոչուող մարմինն լինի համերաշխ և կազմակերպեալ եռանդի հետ հեռատեսութեամբ, գործունէութեան հետ գիտակցութեամբ և ամէն պարագայի մէջ վստահութեամբ և անկեղծութեամբ, այժմէն կարողիմք հաւատալ թէ պիտի յաջողիմք։

Մեր այս տեսութիւն փոքր ինչ պարզելէ յետոյ կը փութամք մի քանի խօսք եւս մեր եղրակացութեան մասին յայտնել։ Մենք որ մինչեւ ցարդ արդէն գտնուած Հայր. Միութիւններն ի մի ձուլելու կողմն էինք, կը վարանիմք որ եթէ բոլորովին նոր կեդր. Հայր. Միութիւն մը կազմակերպելու ձեռնարկենք, շատ մը արդ-

դելքներու և խոչընդոտներու պիտի հանդիպիմք։ մեր դէմն պիտի ունենանք շատ մը կուսակցութիւններ, որոնք հասարակաց օգտին առջև փոխանակ հրապարակէն հեռանալու, առաւել ցասմամբ և հակառակութեամբ պիտի պատասխանեն մեր ձեռնարկին։ այսու հանդերձ անարդարութիւն եւս կը լինի, դոցա առաւել կամ նուազ ծառայութիւնքը անտես առնելով ապերախտ դըտնուիլ։ հետեւաբար ուրիշ բան ըրած չենք լինիր, բայց եթէ նորանուն մարմին մ'ալ մենք պիտի ստեղծենք՝ որով կըլլայ «յետինն չար քան զառաջինն»։ Ուստի ի՞նչ հարկ կայ նորին։ Մենք նպատակ մը ունինք մեզ համար, այն է՝ Հայ Ազգին գոյութիւնն պահպանել։ այդ պահպանումը բացորոշապէս երկու միջոցով կարելի է։ Դիմում և Յեղափոխութիւն։ այդ երկու սկզբանց ծառայող մարմիններ ունիմք արդէն։ Դիմելու գործը՝ այսինքը ինդրոյն քաղաքագիտական մասը «Լ'Ամարէնի»ի ուղղութեամբ իսկ յեղափոխական մասը «Հնչակ»եան ուղղութեամբ։ Մեր կարծիքով երկու մարմին պէտք է։ մին՝ Կեդր։ Հայր։ Միութեան Տնօրէն Ժողով որ պէտք է գտնուի անպատճառ ի Լոնտոն, ի մօտոյ յարաբերութեան մէջ մնալու Եւրոպական կամ Հայ Ազգի համակիր տարրի հետ։ իսկ երկրորդն՝ Կեդր։ Հայր։ Միութեան Գործադիր Ժողով, որ պէտք է գտնուի անպատճառ Թուրքիոյ մէջ կամ մօտ (Եգիպտոս, Յունաստան, Կիպրոս) անմիջական յարաբերութեան մէջ մնալու Հայ ժողովրդի և ամեն գաղթականութեանց մասնախմբոց հետ։ Եւ որովհետեւ այս երկու գործողութիւնք՝ Դիմում և Յեղափոխութիւն համերաշխաբար կամ զուգակցաբար պիտի ընթանան, այն ատեն մեր կարծիքն է որ Պ։ Մ։ Ջերազ, Պ։ Կ։ Յակոբեան, Պ։ Մ։ Փորթուգալեան, և մի անձնաւորութիւն Հնչակեան կազմեն Լոնտոնի Տնօրէն Ժողովն։ իսկ Պ։ Սըվազլը և երկու Հնչակեաններ ի Թուրքիա կամ մօտը, կազմեն Գործադիր Ժողովը։ կարծեմք այս միջոցը ամենէն բանաւորն է։ Ահաւասիկ, Աղնիւ Տէր մեր բաղձանքն ու կարծիքը։ Իսկ խնդրոյն մնացեալ ձևակերպման մասերը մեզ համար Կազմակերպելի Կեդր։ Միութեան կը պատկանի և երկրորդական է։ միայն թէ ա դիտնալու ենք այժմէն որ այս Կեդրոնի Միութեան անդամոց չրջանը չլրանար և սահման կամ ժամանակ չորոշուիր զի նաւապետի պաշտօնն է նաւը մինչև նաւահանդիստը տանիլ։ Նոյնպէս եթէ վերոյիշեալ ընտրելի անդամներէ ոմանք չլսեն ազգի կամքին նոցա տեղ ուրիշներ ընտրել արդար և կարելի է։

Ընդունեցէ՛ք մեր յարգանքները

Մնամք բարեացակամ Ազգիս

11000

ԴԱՐՁ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՑ

ԱՌ 11000

Ահաւասիկ օրինակն նամակին զոր Նիւ Եորքի ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ յղեց առ 11000, ի դարձ նորա պատասխանւոյն։

19 Յունիս 1891

Մեծապատիւ Հայրենակիցք,

91 Մայիս 27 թուակիր իմաստալից պատասխանն զոր մեր չրջաբերական նամակին տալ հաճած էիք, խորին գոհութեամբ ընդունեցանք, և իրրեւ յոյժ կարեւոր դրուած հրատարակութեան տուինք «Հայք»ի մէջ, որպէս զի հանրային կարծիքն լուսաւորուի այժմու Հայրենասիրական կուսակցութեանց կամ խմբոց բաղդատական արժէքին մասին։

Ուրախ եմք տեսնել որ յէական համաձայն կը գտնուիմք։ Մեր բաղձանք չէ նոր Յանձնախումբ մի յաւելուլ արդէն գտնուածներուն վերայ և կամ անդիտանալ անձնուէր և իսկական գործիչներու ծառայութիւններն։ Երբ քուէարկութիւնք կատարուին, ստոյգ կ'երեւի թէ այժմու առաջնակարգ գործիչներու ամենն ալ քուէից մեծամասնութիւն պիտի շահին և ձեր նամակի մէջ յիշուած անձինք պիտի լինին Տիեզերական Կեդրոնի անդամներն։ Այլ հարկ է որ քուէարկութիւնք կատարուին տասն ընտրելեաց վերայ, որպէս զի եթէ քաջածանօթ գործիչներու մին (կամ մի քանին) ժողովրդական քուէի մեծամասնութեան արժանացող հինգերէն լինելով հանդերձ՝ մերժէ Կեդրոնին անդամակցիլ, յայնժամ ժամանակ չկորուսանենք քուէարկութիւններն կրկնելլ տալու, այլ բաղդատական մեծամասնութեան կարգին մէջէն վեցերորդն հրաւիրուի լնուլ պաշտօնն։

Կեդրոնն պարտի զժողովուրդն ներկայացուցանել, ուստի և անոր քուէիւն ընտրուիլ և անոր քուէիւն պաշտօնանկ լինիլ։ Եթէ ՀՆՉԱԿեան ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ կամ այլ ո և իցէ կուսակցութիւն Հայոց վստահութիւնն բարձրագոյն աստիճանաւ կը վայելէ, կրնայ այս անգամ մէկ աւելի անդամ ունենալ Կեդրոնին մէջ, և յաջորդ քուէարկութեան ատեն ալ, եթէ համարումն կորուսած գտնուի, կրնայ բնաւ անդամ չունենալ, վասն զի ամէն ինչ հանրային կարծիքն պիտի որոշէ ընդհանուր քուէարկութեան ձեռքով՝ ոչ թէ անհատից ոմանց կամ յանձնախմբի մի համոզումն։ Ըստ այսմ, Կեդրոնական Յանձնախմբի անդամոց պաշտօնն չկրնար մշտնջենաւոր լինիլ, անպայման ժամանակաւ պաշտօնի կոչուողն շատ դիւրաւ կը զեղծանի, պէտք է որ ժողովրդեան ներկայացուցիչ եղող մարմինն հաչիւ և պատասխան տայ ժողովրդեան, անոր համար տարին միանգամ Ընդհանուր ժողով մի ընել կը տրամադրէ մեր Ծրագիր։

Գալով Կեդրոնին մէկ Տնօրէն և մէկ Գործադիր ժողովներէ բաղկանալուն, և այդ երկու ժողովոց տարբեր երկիրներու մէջ հաստատուելուն, որպէս դուք կը թելադրէք, բոլորովին չեմք համաձայնիր ձեզ։ Ձեզ հետ կ'ընդունիմք թէ Գործն երկու մասեր ունի, Դիւա Նագիտական կամ Արտաքին, և Յեղափոխական կամ Ներքին, և թէ, հետեւապէս, Կեդրոնի անդամոց մէջ բաժնուելու են այդ գործեր։ Եթէ ներելի է պիտի ըսեմք թէ Կեդրոնն պիտի լինի մեր ազգին համար Նախարարական ժողովն, ուր Արտաքին և Ներքին Գործոց Նախարարութիւններ պիտի գտնուին, (թերեւս նաև Պատերազմական Նախարար, Ելմտական Նախարար, Կրթական Նախարար ևն, երբ Կեդրոնն զարգանայ։) Բայց եթէ Ներքին և Արտաքին Նախարարութիւնք իրարմէ հեռու գտնուին, մին ի Կիպրոս կամ յԵգիպտոս, զոր օրինակ, և միւսն ի Լոնտրա, շատ չանցած իրարմէ անկախ և առանձին մարմիններու պիտի վերածուին, առանձին ելեւմտով և տարբեր ուղղութեամբ, և յայժամ արդարև յետինն պիտի լինի չար քան զառաջինն։ Հարկ է որ Կեդրոնն մի մարմին լինի, բայց պաշտօններն անշուշտ բաշխուած։ պէտք է որ հինգ անդամոց եւս խելք՝, փորձառութիւնն և դիտողութիւնն գործածուին Ներքին և արտաքին գործոց ուղղութիւնն որոշելու և տնօրինելու համար, թէև գոր

ծաղրութեան մէջ առանձինն պաշտօնէութիւններ գտնուին։ Ներքին գործոց պաշտօնէութիւնն և Արտաքին գործոց պաշտօնէութիւնն կրնան առանձինն աշխատիլ խնդիրներն ծեծելու և ծրագիր պատրաստելու, բայց հարկ է որ ծրագիրն ներկայացուի միասնական դումարման մէջ և հնգին քուէարկութեան ենթարկուի։

Ենթադրելով թէ Լոնտրա լինի սիեզերական Ցանձնախմբին կեդրոնավայրն, առանց դժուարութեան պիտի կարենայ իւր գործողութիւն տարածել բովանդակ Հայ Աշխարհի վերայ ի ձեռն տեղական կարող Ցանձնախմբաց ամենուրեք։

Ցուսալով, Ազնի՛ւ Հայրենակիցք, թէ մեր այս բացատրութիւնք աւելի զոհացուցիչ կերպիւ պարզած կը լինին ձեր առջեւ մեր շրջաբերականի ոգին, և դուք ևս կ՚աշխատիք ընդհանուր քուէարկութեան ժամանակին համար պատրաստութիւններ կատարել, միամիտ անկեղծ յարգանօք,

Ատենադպիր Ատենապետ
Յ. Կ. ՀԻՒՐՄԻԶ Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԱՌ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲ Ի ԹՐՈՑ

Ահաւասիկ օրինակն նամակին զոր Ն. Ե. Հ. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ յղեց Թրոյի Հ. Հ. Ցանձնախմբին ի դարձ նորա պատասխանին՝ հրատարակեալ «Հայք»ի նախորդ թուով։

Ազնիւ Հայրենակիցք,

Խորին գոհութեամբ ընդունեցանք զպատասխանն զոր փութացած էիք տալ մեր շրջաբերականին, և մեծ ուրախութիւն եղաւ մեզ իմանալ թէ տեղւոյդ Հայ Գաղթականութիւնն արդէն կազմակերպուած է ի Ցանձնախումբ և պատրաստ է ծանուցեալ ժամանակին մասնակցիլ ընդհանուր քուէարկութեան։

Ձեր Ցանձնախմբի երեք դիտողութիւններն ի մասին թելադրեալ Ծրագրի ինչ ինչ կէտերուն՝ բանաւոր և ընդունելի կը թուին մեզ. երբ ամէն կողմանէ ընդունիմք դիտողութիւններ, յայնժամ անշուշտ պատրաստ պիտի գտնուիմք Ծրագիրն բարեփոխելու և նորէն հրատարակելու, ինչ որ պիտի ընեմք ձեր ևս դիտողութիւնն ներն ի հաշիւ առնլով։

Մնամք եղբայրական ողջունիւ

Ատենադպիր Ատենապետ
Յ. Կ. ՀԻՒՐՄԻԶ Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ահաւասիկ Տիար Պահլաւի Բ. յօդուածն, զոր նախորդ թուոյ մէջ չկրցինք զետեղել։

ՊԱՏԱՍԽԱՆ Մի

Առ Մր. Ս. Կ. Ու. Պէնճէմին

(Տես «Հայք» Ապրիլ 15 ամսաթիւը)

Մր. Պէնճէմին կ՚ըսէ «Հայոց ներկայ անհանդարտութիւնը կրնայ Տաճկաստանի ամրողջութեան և Եւրոպայի խաղաղութեան համար քան զամենայն վտանգաբերն հանդիսանալ»։ «Հայկական յուզման ծանր հնարաւորութիւնք յայնմ են, զի Ռուսիա 61 րդ յօդուածին վերայ յենլով կրնայ դովելի և մարդասիրական երեւոյթով յառաջ անցնիլ Հայերուն օգնելու համար, ինչ որ չէր կրնար ընել Պուլկարիոյ դէպքին մէջ, միւս կողմանէ Հայոց երկրային անկախութիւն շնորհելու սատիպել զԹուրքիա պիտի լինէր վերջին աստիճան վտանգաբեր Օսմ. պետութեան կենացն։»

Մր. Պէնճէմին ի վերջ բան կ՚եզրակացուցանէ և կը խրատէ ևս, թէ՝ «Հայոց համար իմաստնագոյն ընթացքն է, ուրեմն, չափաւորութեամբ և համբերութեամբ հաստատելեղանակ կելոյ մի իրենց և կառավարութեան միջև (!) ամեն կերպիւ ջանալով վերահաստատել այս վերջնոյս վստահութիւնն իրենց հաւատարմութեան և հպատակութեան վրայ։

Արդեօք Թուրք էմին մի տակից տարբեր խրատ մի կրնա՞ր տալ մեզ. համեմելով զայն հրապուրիչ խոստմամբ մի թէ՝ «այս ընթացիւք (իմա իւր խրատով) թերեւս վերջապէս Սուլթանին հարկատու հայկական նահանգ մ՚ընդ Հայ կառավարչաւ ունենալ։»

Մր. Պէնճէմին Հայոց անկախութիւնը Օսմ. պետութեան կենաց վտանգաբեր համարելէ զատ, կը հաւատայ թէ Հայոց տէրութեան վախճանն ալ պիտի լինի արագ ընկղմումն Ռուսիոյ մէջ։

Բայց ի՞նչու Հայոց տէրութիւնն վտանգաբեր պիտի լինի Օսմ. Պետութեան կենացն և ի՞նչու նա պիտի ընկղմի Ռուսիոյ մէջ, այդ մասին բան մի չգրեր Մր. Պէնճէմին, ընդհակառակն հաստատողներ կան, ինչպէս Մր. Ռոսլէրթ Սթայն և այլ բազումք թէ Հայոց ազատութիւնը կրնայ Ռուսիոյ և Հայաստանի միջև պատերազմի մը առաջքն առնուլ, և մէթէ Մր. Պէնճէմին ասոր համար չ՚քարոզեր Հայոց հանդարտութիւնն...։

Բայց հարկ է լաւ գիտնալ թէ Հայք Թրքաց գերութենէն ազատուելով միայն կրնան հանդարտիլ և այն ատեն ոչ Ռուսիոյ թեւարկութեան տեղի կը մնայ, ոչ Եւրոպայի խաղաղութեանը և ոչ տաճկաստանի ամրողջութեանը վտանգաբեր կը լինի, երբ Թուրքն չպարտաւորէ Հայերն ապստամբութեան և կամ Ռուսիոյ օգնութեան դիմել։

Հայք բոլորովին կը զանազանին ցեղային յատկութեամբ թէ Ռուսէն և թէ Թուրքէն. սակայն Հայք թէ Ռուսիոյ և թէ Օսմ. Պետութեան մեծամեծ և անփոխարինելի ծառայութիւններ մատուցած են և սիրած են զանոնք, երբ զիրենք ճնշեալ չեն դտած իրենց տիրողներէն։

Հայք եթէ այսօր վայելեն ազատութիւն թեւարկութեամբ և բարեհաճութեամբ Թուրքին, ոչ միայն Թուրքն պիտի զօրանայ այլ միանգամայն Եւրոպա ևս պիտի կարենայ վստահ լինել թէ Ռուսն Հայաստանի մէջ յառաջանալու պատճառ պիտի չունենայ այլ ևս։

Իսկ հակառակ պարագայի, բնական է որ Հայք լինին վրէժինդիր Թուրքիոյ, այն ատեն միայն՝ պիտի կոր ծանի Թուրքիա. մանր իշխանապետութիւնք կամ թագաւորութիւնք որք պատած են զինքն, պիտի յարձակին և վերջ տան անոր գոյութեան. ոչ ևս պիտի զօրէ Եւրոպիոյ դիւանագիտութիւնը, և յայժամ պիտի տիրէ Ռուս քաղաքականութիւնը յԱրեւելս և պիտի ճնշէ յԱրեւմուտս։

Եւրոպիոյ դիւանագիտութիւնը հաշուելով զայս ամենայն, չգրկեր հայկական դատն Մր. Պէնճէմին, թէ ոչ, գիտունք կը վկայեն թէ՝ Հայք արուեստք, բանաստեղծութիւն, աւագ մարդիկ և զինուոր ազգի պատմութիւն ունեցած են և ունին, զայս կը հաստատեն

Հայոց գոյութեամբը՝ ճոխ լեգեոնը և դարաւոր հընութեամբ փայլող աւերակաք և դեռ կանգուն մնացած եկեղեցեաք, կամուրջներով, բերդերով և հարուստ մատենագրութեամբ:

Միթէ նուազ ապացոյց են նաև աշխարհիս վրայ փայլող մեծահռչակ Հայ նկարիչք, փորագրիչք ադամանդի, քանդակագործք, ճարտարապետք, բանաստեղծք, դիւանագէտք, զօրավարք են ևն. որք իրենց նախնեաց ձիրքերն կը վայելեն:

Հայք միշտ իրաց վանած են բոլոր ճնշումն ազգի և կրօնի վրայ, նոյնիսկ անզօր եղած միջոցներին: Հայկ, Արամ, Վարդան իրարմէ դարեր բաժնող ոսոցա պատմութիւնք ոչ միայն նոյնը կը հաստատեն, այլ ամբողջ Հայ պատմութիւնը նոյնը կը վկայէ, և միթէ այսօր իրողութիւնք միեւնոյն բանը չե՞ն հաստատեր:

Թուրքը երբ չէր նեղեր Հայերն ու անոնց կրօնն և պատմութիւնը ազատ հռչակած էր, թոյլատրելով իրենց ներքին գործոց բոլորովին ազատ անօրինումն, մինչ իսկ 1860 ին սահմանադրական օրինաք. Հայք ոչ մի բողոքոյ ձայն չբարձրացնելով միշտ իրր ամենահլու և հաւատարիմ հպատակ ծառայեցին անոր, առանց մասնակցելու Յունական, Սերպական, Ռումանական և Պուլկարական շարժմանց ընդդէմ Թուրքիոյ և հինգ դարեան հաւատարմութեան և ծառայութեան փոխան, Հայք և ոչ իսկ արժանացան հակառակ Մր. պէնճէմինի համեմին կամ դուշակութեան մի Հայ կառավարչի և ոչ Տեղական ոստիկանութեան:

Թուրք կառավարութիւնը Հայոց ծառայութեան ի վարձատրութիւն, սկսաւ Մասնաւորապէս զանոնք ճնշել և տարագրել աշխատիլ Ռուսիոյ սահմանակից և մանաւանդ Քրիստոնեայ լինելնուն, զի մի գուցէ Ռուսն պահանջէ ապագային նոցա ազատագրումն և Եւրոպա մեծամասնութեան խնդիր յարուցանելով տայ Հայոց իշխանութիւն:

Այս պատճառաւ ահա, Թուրքն մասնաւորապէս կը ճնշէ ու կը հարստահարէ Հայերն, իձեռն նոցա բնակակից ցեղերով, Քրդերով, Թրքերով ու Չէրքէզներով և ուր նուազէ Քուրդն ու Թուրքը, Օսմ. կառավարութիւնը անդ կը լեցնէ Ռուսիայէ արտաքսուած վայրենի գող և քրիստոնէից վրէժխնդիր Չէրքէզներով, որպէս զի, ըստ հրահանգի Բ. Դրան, շուտով փճացնեն ու թշուառացնեն Հայերն և անոնց մեծամասնութեան խնդիրը ոչընչացնեն... բաց յայտնէ յաւելցաւ նաև մի նոր եղանակ մարդահամարի որ կը խառնէ մահմետականաց հետ իրարու բոլորովին հակառակ ցեղեր և կը բաժնէ քրիստոնեայ ցեղերը նոյն իսկ իրենց մէջ քաթոլիկ բողոքական և յունադաւան են ևն. ըսելով: Գեղեցիկ գիւտ, առանց որոյ Թուրքն ամեն տեղ մեծամասնութիւնն պիտի կորսնցնէր... սակայն այս դրութեամբ եթէ քրիստոնէից մարդահամարն ընեմք, պէտք է մահմետականք խիստ շատ տեղերէ հրաժարին...:

Կալուածագրութիւն հաստատեց Օսմ. կառավարութիւնն, տուրք մի ևս աւելցնելու դիտմամբ և զանազան անտեղի պատճառաք շատ մի վանքապատկան հողերն ու գիւղերու մշակեալ երկիրներ գրաւեց և պարգեւեց Չէրքէզաց...:

Մր. Պէնճէմին, Հայաստանի դրախտային երկիրը որ մէկ ցորենի փոխան կուտայ 60–70–80 հատ և ուր բընութեան պարգեւք ամենայն առատութեամբ չռայլուած են, Հայք իրենց տոկուն աշխատասիրութեամբ, հնարագիտութեամբ, գործունէութեամբ և ճարտարութեամբ ինչպէս կը վկայէք որ ունին, չը կարենալով ապրիլ պարտաւորուած են աշխարհիս չորս կողմն ցրուիլ և բընաւ մի զարմանար երբ ըսեմ թէ իրենց սիրելի ամուսնէն և զաւակներէն բաժանեալ, հայրենակարօտ 200 հազարէն աւելի պանդուխտ Հայ կայ, զոհ Թուրք կառավարութեան քաղաքականութեան և Եւրոպոյ անտարբերութեան, և այդ խեղճ ու յետին թշուառութեան ենթակայ Հայերն կը յուսան երբ բաժնուին 5–10 տարիէն կրկին տեսնել զիրար, սակայն երբ հարցնել տաք Պոլիս, Գասրմ-Փաշայի կայանոցի եղերքը շինուած խան անուան եալ նկուղներու, պիտի գտնէք յուսախարներ 20–30 տարիներէ ի վեր թափառական և գերի վիճակէ մի ըսուոր դրութեան ենթարկեալ բազմաթիւ հայեր: Գրթասիրա լինելու հարկ չկայ, բարեսիրտ կառապաշտ մի իսկ, իւր արտասուքը չպիտի կարենայ զսպել եթէ մի անգամ այս պանդխտաց վիճակին տեղեկանայ:

Արդ՝ այժմ ցոյց տուէք ինձ, Մր. Պէ՛նճէմին, ո՞ր ազգեր են ենթարկեալ այս անլուր զրկանաց, Յոյնը Հերեայն, Թուրքն, Քիւրան թէ Չէրքէզն, կամ անոնք որք հարստութիւն դիզելու տենչով Պոլիս կը դիմեն և գործի կը զբաղին:

Ուրեմն երբ մասնաւորապէս Հայոց զրկանքներն կը հաստատուին անկաշառ և անաչառ հիւպատոսներու ու ճամբորդներու միջոցաւ և Կապոյտ Տետրեր աշխարհի կը հռչակեն զայնս և որ աւելին է իրողութիւնք կը խօսին, մարդիկ պէտք է լռեն և գարման խորհին յանուն մարդասիրութեան և քրիստոնէութեան:

Ի՞նչ է գարմանը — Մր. Պէնճէմին շատ լաւ գըտած է իւր թրքասիրութեամբ հանդերձ, ահա իւր առաջարկութիւնը մեր ապացոյցներու հանդէպ, որ բառ առ բառ կօրինակեմք:

«Եթէ ապացուցուած լինէր թէ միայն Հայերն յատկապէս նշանակ եղած են այս չարեաց, կամ թէ նոքա մասնաւոր ատելութեան առարկայ են, կամ թէ Քրիստոնեայ Աշխարհի մէջ քան զամենայն աւելի տագնապեցուցեալ ժողովուրդն են, յայնժամ յիրաւի պարտէր Քրիստոնեայ Աշխարհն ոտքի ելնել նետել Թուրքն իւր Գահէն, և ժողուելով Հայերն աշխարհի ամեն կողմէն վերահաստատել զայնս Հայաստանի լեռնադաշտին վերայ, և պահել ընձեռել նոցա իրենց ազգային գոյութեան խնդիրն կարգադրելու:»

Իսկ ես կը կարծեմ թէ հինգ տէրութեանց մէյմէկ գրահաւոր նաւք կարեն պարտաւորել Թուրքն, որ տայ Հայոց իշխանութիւն ինքնօրէն:

Քէօսթէնճէ 1891 Մայիս 9 Վ. Յ. ՊԱՀԼԱՒ

ՏՈՔԹՈՐ Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

Փոխադրած է իւր բնակարան ի թիւ 164, Արեւելք 80 րդ փողոց, ուր հիւանդ կ'ընդունի առաւօտեան ժամ 8 էն 9 և երեկոյեան ժամ 6 էն 8:

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Տարեկան բաժանորդագինն է 10 ֆռանք հասցէն է

Redaction de la Revue "Basmavep" St. Lazare, Venise. (Italie.)

ՀԱՅԵՐԷՆՆ ԻՐԵՆ ԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Շար. և վերջ տես թիւ 11 և 12

ԳԱԼ

Այս ուսումնասիրութիւն կը բերէ զմեզ այն եզրակացութեան թէ հայերէնն գերազանց լեզու մ'է։ Ինչ ալ որ լինի նորա ծննդաբանական յարաբերութիւն հնդեւրոպական և դուրանեան լեզուաց հետ, ի բնէ հնդեւրոպական եղած լինի կամ դուրանեան, դրացի աղգաց լեզուներէն փոխառութիւններ ըրած լինի կամ հպաւորութեամբն անոնցմէ սնունդ ծնած, հայերէնն կազմակերպեալ և ինքնատիպ հանգամանօք լեզու մ'է, անհուն զարգացման ընդունակ, գիտական և գրական մատենագրութեան յարմար, և ատենախօսութեան եւս ամենայն փափկութեանց զարմանալի ճապկութեամբ պատկանաւոր։

Ատենախօսական տեսակէտով մեր այն ուսումնասիրութիւն կը թելադրէ ուղղագրական սկզբունք մի եւս, յոր կ'արժէ հրաւիրել մասնաւոր ուշադրութիւն։ Ծայրայեղ աշխարհաբարեաններ կան որք աշխարհաբարի իրաւունքն կը համարին ինչ ինչ աղաւաղումներ անգամ. սովորաբար կը գրեն ու կը հնչեն թ ո թ վ ե լ, թ ա թ ղ ե լ, փ ա թ թ ե լ, կ ա ր կ ա ե լ, ևն, ինչ որ բուն հայերէնի ոգւոյն բոլորովին հակառակ է և այդ բառերն անկենդան դիակներու կը դարձուցէ. պարտ է միշտ գրել և հնչել թ ո թ ո վ ե լ, թ ա թ ա ղ ե լ, փ ա թ ա թ ե լ, կ ա ր կ ա տ ե լ (կ ա ր կ տ ե լ կարկուտ տեղալ կը նշանակէ։)

Կը հանդիպիմք նաև տառագրական սկզբունքի մի։ Որոնք ալ որ եղած լինին հայերէնի բնակից լեզուք, և որքան բազմաթիւ ալ լինին այն հայերէն բառեր որոց ճիշդ կամ մերձաւոր նմաններն դանուին օտար լեզուացմէջ, սա անհերքելի է թէ մեր բառերու նախնական պաշարին մեծ մասն բնիկ հայկական կրնայ նկատուիլ, կամ որոց մասին մեք այնքան կրնամք մերն է ըսել որքան ուրիշ ցեղակից լեզուներ։ Դիւրին է տեսնել թէ ա ղէ՛, կ ր կ է ս, կ ա յ ս ր և այլ ոչ սակաւք օտարամուտն են. բայց երբ կուգանք հ ա մ, պ ա պ ա կ ի լ, ք ա յ ք ա յ ե լ, թ ռ չ ո ւ ն, մ ա լ ո ր ի լ, կ լ ա ն ե լ, թ ք ա ն ե լ, հ ե ւ ա լ, հ ա ռ ա չ ե լ ևն ևն բառերու, որոց թիւն մեծ է, անոնց վերայ այնպիսի բնական դրոշմ կը տեսնեմք և այնպիսի հայկաղանութիւն զի կրնամք անոնց վերայ մեր ձեռք ամրապէս դնել և մերն է ըսել. փոյթ չէ թէ ցեղակից լեզուաց մէջ անոնց համանիշ և համահունչ արմատական ձայներ գտնուին։

Բառերու բնական կազմութեան այս՝ ուսումնասիրութիւնն թոյլ կուտայ մեզ սկզբունք մ'ալ հաստատել հոմանիշ բառերու որոշ նշանակութիւնն ճշդելու օգնող։ Դիտելի է թէ ա տ ա մ ն բառին արտասանութեան մէջ տատմունք գործ ունին, լ ե զ ու բառին համար լեզուն կ'աշխատի, «պ ր կ ո ւ ն ք» բառին համար՝ շրթունքն. ու ն չ և ռ ա ւ ն դ ն բառերուն համար ունչ և ռունդ. այսինքքն յօդաւորութեան գործարանաց որ մասն որ նշանակել ուզուած է, այն մասն աշխատակցած է ինքզինք նշանակելու։ Արդ, գիտնալու համար թէ ի՞նչ որոշ մասեր մեր բերանի խորութեանց մէջ կը ցուցնեն ք ի մ ք հ ա գ ա գ և կ ո կ ս ր դ բառերն, վերի սկզբունքն մեզ լաւագոյն առաջնորդ եղած է քան ամենայն մեծ կամ փոքր բառգիրք. հնչեցինք այդ բառեր կրկին և կրկին և ուշ դրինք թէ իւրաքանչիւրի արտասանութեան մէջ բերանի ո՛ր մասերն աւելի գործօն դեր կը կատարեն, և այդպէսով խնդիրն պարզուեցաւ։ «Քիմք» «հագագ» և «կոկորդ» հետ զհետէ աւելի խորագոյն մասեր կը նշանակեն մեր բերանի մէջ։

«Միծաղիլ» և «խնդալ» «համբոյր» և «պագ» հոմանիշներուն իրարմէ տարբերութիւնն նոյն սկզբան յենլով նշանակեցինք ի վեր անդր։ Ուրիշ բազում հոմանիշներու երանգներն կարելի է ճշդել այս կերպիւ. օրինակի համար խ ո խ ո ջ և կ ա ր կ ա ջ անտարբեր հոմանիշներ չեն կրնար լինիլ. «խոխոջ» ձայնն է աւելի մեծ քանակութեամբ և աւելի խորաւուբորտ յատակի վերայ ընթացող վտակի կամ գետոյ, մինչ «կարկաջ» աւելի համեստ ձայնն է նուազ անհարթ յատակի վերայ ընթացող և նուազ ահագին վտակի։ Բայց այս մասին երկարել չէ տեղոյս։

Վերջապէս ըսենք թէ աշխարհաբարի կամ գաւառաբարբառաց մէջ մեծ գանձ կայ ընտիր բառերու և ասացուածոց որք հայկաղանութեան խորին դրոշմն կը կրեն, թէեւ մեր գրաբար մատենագրութեան մէջ չեն գտնուիր. այսպիսի բառեր պարտին մուտ գտնել նորոգ մատենագրութեան մէջ, ըստ որում այնքան լաւ հայերէն են զի կրնար ոք գրաբար մատենագրութեան մէջ իսկ գործածած լինիլ զայնս ամենայն պատշաճութեամբ։ Պարտ է խոստովանիլ թէ գրաբարի մէջ ի հնումն գործածուած լինելով՝ այժմ յարգուող բառեր կան որք նուազ հայերէն և նուազ շնորհալի են քան այն կարգի բառերն որոց մասին կը խօսիմք։ Օրինակի համար պ ո ւ տ և պ ա պ տ ա լ, փ ք ն ե լ (փչելով թեւին կամ անոր նման թեթեւ մասերն զատել, ի բաց մաքրել), թ ա փ թ ը փ ե լ, տ ն տ ն ա լ, կ ա պ կ պ ե լ, մ տ մ ը տ ա լ, չ ը ր (ամուլ), մէջկապ (գօտի), ջ ր ջ ր ո ւ կ (մանր պալար), գ ո ռ գ ռ տ ա լ, հ ե ր ն ե կ (հերունեկ, մէկ տարեկան) ննլիկ (փոքրիկ բան, աւելորդ պիտոյք). «մէկ ննլիկէն ար չմնար») միղծ (կարի մանր փոշի) «ապակիին վերայ միղծ է նստեր,) և այլ անհամար։

ՀԱՐՍՏՀԱՐԵԼԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ

Տիկին Պիչըփի հրատարակութիւնն զոր ի Հայաստան ուղեւորութենէն դառնալով ըրած է և զոր մեր 11րդ թուի մէջ յիշեցինք, յոյժ ճշգրիտ պատմութիւնն կը պապարունակէ Վարդենիս գիւղի անցեալ տարուան աղէտներուն, զորս անկարելի է կարդալ առանց դայրագին անիծելու Թրքական կառավարութիւնն։

Մշոյ Դաշտին քրիստոնեայ գիւղերն կողոպտուած էին մինչեւ որ այլ ոչ ինչ մնացած էր կողոպտելու, և անդգամութիւնք յոռեգոյն քան զգողութիւն տեղի ունեցած էին, կենաց բազում կորուստներով։

Ի մէջկոյս Նոյեմբերի, Հայոց Բարեկարգեալ Եկեղեցւոյ երիցանց երկուքն եկին գիս տեսնել, ըսելով թէ մեծ փափաք ունէին յանուն իւրեանց ինչպէս նաեւ յանուն — ի և — ի Քրիստոնէից պատմել հետեւեալ պատմութիւնն գրի առնուլու համար։ Ըսին թէ իրենք երաշխաւոր են պատմութեան ամեն կարեւոր մանրամասնութեանց ճշգրտութեանն, և իրենց անուններն և հասցէներն ալ ինձ տուին։ Բարձրաբարոյ և կրթեալ Եւրոպացի մ'ալ վկայեց անոնց ուղղամտութեան և քաջ տեղեկութեան և թարգմանեց անոր խօսքերն, և ես գրի առի զհետեւեալն։

«Հարս մի, տարի մ'առաջ ամուսնացած, Մուշաքիրէն ի Վարդենիս կը տանէին ի տուն հօրն, ուր ըստ սովորութեան ձէնուած էր։ Հինգ հոգի Վարդենիսէն գացած էին զինքն տաններու։ Ճամբուն կէսն հասած էին երբ Քրդեր վրայ եկան և հարսն ուզեցին։ Իրենց գլուխն էր Հասան Մօ, Մուսա Պէկի մեղսակիցներէն։ Հարսն տանող մարդիկն աղաչեցին թոյլ տալ իրենց որ անցնին երթան, և Քրդաց ոմանք հաւանեցան։ Հասան Մօ պատասխանեց «վաղուց կուզէի ձեզ ձեռք ձգել, կարծէ՞ք թէ աղաչելով պիտի պրծիք։» Յայնժամ հարսին ձիուն սանձէն բռնելով փորձեց քաշել տանիլ զայն։ Հարսն, ինչպէս սովորութիւն է, պճնուած էր դրամներով և արդուզարդով։ Հայերն աշխատեցան ձին ետ բռնել։ Մինչ այս պէս կը քաշկռտուէին, Քրդաց մէկն կրակ ըրաւ և Հայերուն մին սպաննեց։ Երբ նա զարնուեցաւ, ուրիշ մ'ըսաւ «մեզ կը սպաննեն ահա, մեք ալ կրակենք։» Եւ արդա-

րև կրակ ըրին, սպաննեցին երկու Քուրդ և զՀասան Մո վիրաւորեցին ծնկէն։ Իրենցմէ մին եւս վիրաւորուեցաւ։ Այս հրացանաձգութեան միջոցին Հարսն պրծաւ, և ձին վազցունելով դնաց տուն։ Այն տեսն Քրդերն թողուցին գացին, և Հայերն, իրենքզիրենք պաշտպանած լինելու հետեւութիւններէն վախնալով, փախան և պահուեցան ըլլոց մէջ։ Եւ երբ դէպքին լուրն հասաւ ի Մուշ, և թէ Հայերն մի քանի Քուրդ սպաննած էին, 800 զօրք և 4 թնդանօթ յղուեցան Վարդենիսի դէմ, որ 150 մաւոր դեղ մ'է։

Երբ ժողովուրդն լսեց թէ զօրք կուգար, կիներէն դուրս փախուցին որքան որ կրնային։ Զօրքն երեք դնդի բաժնուած էին, առաջին գունդն վրայ հասաւ դիշերայն, միւս երկուքն ճամբուն վերայ կը սպասէին իբրեւ վերջապահ։ Վարդենիսցիք, իրենք զիրենք Քրդերէն պաշտպանելու համար գիւղին շուրջն կը հսկէին իրենց հնոտի հրացանօք։ Զօրաց առաջնորդն էր Հայ մի, որ, վախնալով թէ դուցէ պահապանքն կրակ ընէին զօրաց վերայ՝ Քուրդ կարծելով զայնս, պոռաց· «Ե՛ղբարք, մեք եմք, և մեր հետիններն զօրք են։» Յայնժամ զօրապետն ծեծեց զՀայն, և ըսաւ «ինչո՞ւ ասանկ խմաց տուիր իրենց,» վասն զի կը փափաքէր որ կրակ ընէին պահապանքն և ինքն պատճառանք ունենար զվարդենիս աւերելու։ Անդէն զօրքն պաշարեցին զգիւղն, այնպէս որ ոչ ոք խոյս տար, կապեցին բոլոր չափահաս արուներն, աւրեցին գիւղն, պղծեցին կիներէն մէկ քանին, կողոպտեցին անոնց զարդերն, և 65 հոգի կապած առին տարին դէպ ի Մուշ։ Ճամբուն վերայ պատահեցան վերջապահ գնդերուն, և երբ քաղաքին մօտ հասան, բոլոր մահմետական ժողովուրդն դուրս վազեց որ կապուածներն սպաննէ, բայց զօրքերն պաշտպանեցին և իբանտ դրին Հայերն։ Յետոյ վաճառեցին ուրիշ գիւղերու կիներէն կողոպտուած զարդերն։

Երբ դատի կոչուեցան, 65 բանտարկեալք փատաբանեցին թէ, բայց ի վիրաւորեալ մարդէն որ իրենց հետ էր իրենք մասն և բաժին չունէին դէպքին մէջ, միւսներն լեռն փախած լինելով։ Կառավարութիւնն ըսաւ թէ «հարսն» ծպտեալ մարդ մ'էր և ժողովուրդն գրգռելու եաւէլ եղած էր։ Ի պատասխանի՝ հարսին պարնտասն, Մուշաքիրի գիւղապետ, ըսաւ թէ վկայ ունէր Քուրդ պէկեր որք իրեն տունն էին երբ հարսն և անոր հրաւիրակներն մեկնեցան անէն։ Հետեւապէս այս ամբաստանութիւնն ոչնչացաւ։ Ժամանակ մի զայնս բանտարկած պահելէ յետոյ, աղքատագոյններէն 22 ն ճամբեցին, և քանի մ'օր առաջ ալ (Նոյ· 12) 26 հոգի եւս ազատեցին։ Մնացեալ 17 ն տասնեւհինգամեայ բանտարկութեան դատապարտեալ են, որ է Թրքական օրինաց խստագոյն պատիժն։

Այս դէպքէն առաջ արդէն Վարդենիս մեծապէս նեղուած էր։ Գիւղացւոց երկուքն զաղտնապէս սպաննուած էին Քրդաց ձեռօք, մին արտն ջրելու պահուն՝ Էրզրումի կոտրածէն յետոյ, միւսն ալ վարժապետ մը էր զոր կողոպտել կ'ուզէին, և ինքն աշխատած էր ինք զինք պաշտպանել· զինքն վիրաւորեցին, և յետոյ վէրքերէն մեռաւ։ Իբրեւ առաջի Աստուծոյ կը խօսիմք ըզճշմարտութիւն։»

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ի խնդրոյ Ռուսական դեսպանին՝ Բ·Դուռն առժամանակեայ դադարման դատապարտած է Պօլսոյ ԼԵԻԸՆԹ ՀԵՐԸԼՏ թերթն, յօդուածի մի համար յորում Ռուսիոյ կայսերական ընտանեաց մասին անմեծարոյ լեզու գործածուած էր։ Զարմանալին այն է որ նոյն Լրագիրն արդէն երկու անգամ դատապարտութիւն կրած էր նոյն պատճառաւ, և ամէն անգամ ալ հակառուս յօդուածն հրատարակուելէ առաջ Թրքական գրաքննութենէ անցած էր։ Ըսել է թէ Կառավարութիւնն հաճութեամբ թոյլ կուտայ հրատարակութիւնն, և յետոյ Ռուսիոյ դըժգոհութեան գոհացում տալու համար կը պատժէ թերթն։

Հետեւեալ ծանուցումն Ռուսիոյ «Օտէսա» քաղաքէն մեզ յղուած է ի հրատարակութիւն։

Խնդրում եմ Ամերիկայի Պանդուխտ ազգայիններին, որոնք Օտէսա եկած և ինձանից ճանապարհածախս առած են, «ՀԱՅՐ»ի խմբագրութեան վճարել և ընկալագիր առնել իմ կողմանէ երկու օրինակի համար։—

Եղեսիայի ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՏՈՒՐԵԱՆ

—Ամէն տարի, դրեթէ նոյն եղանակին, հնտասան(քոլէռա) երևան կ'ելնէ տուրբ քաղաքաց Գաւառին մէջ յԱրաբիա, ուր բազմաթիւ ուխտաւորներ կ'երթան։ Յոգուտ հանրային առողջութեան, Սուլթանն Կ·Պոլսոյ Առողջապահական Խորհրդոյ Նախագահն առաքած է ի Հիճազ, պաշտօն տալով նմա հսկել սրբավայրից մաքրուելուն։

—Զէրքէզ-քեօյի աւազակութեան դէպքն ծանօթ է մեր ընթերցողաց։ Գերմանական Դեսպանն Սուլթանէն ընդունած է 10,000 լիրայի գումարն, զոր իբրև փրկանք յղած էր աւազակաց։ Թէև Կառավարութիւնն ուզած էր զօրք ղրկել աւազակաց դէմ, Դեսպանն արգիլած էր, վասն զի աւազակք յայտարարած էին թէ, այէ դէպքի մէջ, պիտի սպաննէին պատանդներն։

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ ԵՒ ՆԱԻԻ ՏՈՄՍԱԿ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժան և ապահով Թուրքիոյ ամէն քաղաքաց համար, կեդրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ·Պոլիս։ Նոյնպէս կրնամք դրամ ղրկել Եւրոպա ուր որ ուզուի պանդայի միջոցով։ Նաև գոհացուցիչ գներով տոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար, նոյնպէս Թուրքիոյ ամէն նաւահանգիստներէն դալու և երթալու համար Թրիէսթի ճամբով։ Նամակներու անմիջապէս կը պատասխանուի։ Պէտք է դիմել կամ դրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Տարեկան բաժանորդագինն է 10 ֆրանք· վեցամսեայ՝ 6 ֆրանք Հասցէն է

Redaction de la Revue Hantess" Au Couvent des R R. P. P. Mechitharistes. VII, Mechitharistengasse 4 VIENNE. (AUTRICHE.)

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ·Ս·ԳԱԲՐԻԷԼԵԱՆ